

Մրցույթի հայտարարություն

«ՀՀ Սյունիքի մարզի Սվարանցի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ -ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 2-րդ կետի համաձայն «Ս.Առաքելյանի անվան Տաթևի միջնակարգ դպրոց», «Սվարանցի միջնակարգ դպրոց» և «Տանձատափի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ների կոլեգիալ կառավարման մարմինը՝ միացյալ խորհուրդը, հայտարարում է մրցույթ տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը,

2) ուսումնական հաստատության կառավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և

Էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են « Սվարանցի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ –ում 2022 թվականի դեկտեմբերի 19-ից մինչև հունվարի 10-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 15.30-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի հունվարի 24-ին ժամը 14:00-ին «Սվարանցի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ –ում: Հասցե՝ Սյունիքի մարզ հ. Տաթև. Գ. Սվարանց, փ.4, 2.11:

Տեղեկությունների համար դիմել՝ խորհրդի կողմից լիազորված անդամ Արմենուհի Վարդազարյանին: Հեռ. (077 55- 25- 44), Էլ. հասցե svarants@schools.am :